



ՀԵՏԱԲՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Ուրանի ռադիոակտիվության հայտնագործումից հետո Մարիա և Պիեռ Կյուրիները փորձեցին հասկանալ՝ ռադիոակտիվությունը միայն ուրանի հատկությունն է, թե՛ կան այդ հատկությամբ օժտված այլ քիմիական տարրեր ևս: Այդ նպատակով նրանք ուսումնասիրեցին այն ժամանակվա հայտնի բոլոր քիմիական տարրերը և հայտնաբերեցին ևս երկուսը՝ ռադիումը և պոլոնիումը: Մրանց ճառագայթման ակտիվությունը մոտ 1000 անգամ գերազանցում էր ուրանի ակտիվությանը:

Կյուրի ամուսիններն ուզում էին ավելի խոր հետազոտություն կատարելու համար ռադիումի հանքաքարից մաքուր ռադիում անջարել: Սա չափազանց ծանր աշխատանք էր: Մարիա Կյուրին մշակեց շուրջ 11 տոննա հանքաքար, ստանց որևէ պաշտպանական միջոց օգտագործելու: Մարդիկ ամենևին պարկերացում չունեին ռադիոակտիվ ճառագայթման վրանգների մասին: Ռադիոակտիվ փոշին լաբորատորիաներում կուտակված էր: Փորձարար գիտնականները փորձանմուշները վերցնում էին ձեռքով, պահում գրպաններում: Անգամ 55 տարի անց Մարիա Կյուրիի նոթապետերը ճառագայթում էր, այնքան ուժեղ, որ հաշվիչ սարքը ձրթձրթում էր: Մարիա Կյուրին մահացավ 1934 թվականին՝ ռադիոակտիվ ճառագայթման մեծ չափաքաժին սրանալու հետևանքով: